

J. ARNOTT HAMILTON, Byzantine Architecture and decoration. London, 1933, VIII + 172, LXXI ևս...

Ներածութեան մէջ (էջ 1—13) ընդհանուր ահմարկ մը կը նետէ բիւզանդական ոճի վրայ, որ սիւնուած է նաեւ բիւզանդական սահմաններէն դուրս՝ հիւսիսային Ռուսիայի դաշտերէն մինչեւ Եգիպտոսի անապատը, Հայաստանի լեռներէն մինչեւ Ալուիտանիոյ քաղաքները: Հայաստան թ. դարուն, որ բիւզանդական արուեստի համար նոր շրջան կը նշանակէ, հիւսիսային թերթի է ճարտարագետութեան մէջ եւ քանի մը հեղինակներու համաձայն ուժեղ ազդեցութիւն կը գործէ արեւմտեան երկիրներու վրայ (էջ 8): Բիւզանդական ճարտարագետութեան նկարագրական ձեւն է քառակուսւոյ վրայ դմբեթ (զլ. Բ, էջ 14—27), որուն ծագումը վէճի նիւթ է: Ետտ հին ժամանակ արդէն քառակուսւոյ վրայ դմբեթ գործածուած է Միջին Արեւելքի փայտակերտերու մէջ: Միջնադարի եւ Հայաստանի ճամբով նա անցած է Արեւմուտք: Չանադան էին քառակուսիէ՝ դմբեթի անցնելու համար գործածուած միջոցները: Այդպիսի էր sqinch (անկիւնաղեղը), այսինքն քառակուսւոյն անկիւններուն մէջ հիւսուած շարք մը աղեղներ, որոնք տակաւ կը բարձրանային ու կը խոնոտէին դմբեթին: Անոր գործածութիւնը սովորական էր Հայաստանի մէջ (էջ 16): Հայկական ազդեցութեան արդիւնք է անկիւնաղեղի գործածութիւնը ԺԱ. դարու յունական եկեղեցիներու մէջ, օ. հ. Դափնի (էջ 17): — Քառակուսիէ դէպի դմբեթ անցնելու համար գործածուած կարեւորագոյն միջոցն է սակայն կախողը (pendentive): Ն. Ք. 4000 տարի առաջ կը գտնենք գայն Միջնադարի Ուր քաղաքին մէջ: Փոքր Ասիայէ անցած է նա Կ. Պոլիս, ուր կախողի հնագոյն օրինակները կու տայ Ս. Սովիա՝ 537էն (էջ 19): Կախողներու արեւմտեան ծագման մասին կարելի չէ տարակոյս ունենալ (էջ 20): Քառակուսւոյ վրայ դմբեթը իրականացած է գանազան յատակագծերով, որոնցմէ դմբեթարդ չորեքրորը քառակուսին ընդհանրապէս է (էջ 20), որմէ Սարչի-գովսկի յառաջ եկած կը համարի խաչքառակուսին (էջ 24): Արտաքին դարձարանքի մէջ Անադոլիոյ, Հայաստանի եւ Միւրիոյ եկեղեցիները պարզ ձեւերով կը բաւականանան (էջ 26):

Այս ընդհանուր մասին կը յաջորդեն մէջ

մի երկիրներով դրաղող դուրսներ: Հեղինակը բիւզանդական հին եկեղեցիներու հետամուտ կ'ըլլայ Պոլսոյ եւ Սելանիկի, Ռաւեննայի, Նէպոլոսոյ եւ Հոմի մէջ (էջ 28—45): Անոնց դէմ, որոնք Ռաւեննայի մէջ ո եւ է արեւելեան ազդեցութիւն կը մերժեն, կը յիշեցնէ քաղաքին մէջ ներկայութիւնը՝ ստորի փոխարքաներու եւ հայ բանակի մը (էջ 43): Միւրանի Ս. Լորենցոն գոր Սարչիգովսկի թ. դարէն կը համարի եւ Հայկական չորեքրորէն յառաջ կը բերէ, աւելի հին շինութիւն կը կարծէ եւ կ'ընծայէ Ռաւեննական ազդեցութեան (էջ 44): Հոմի մէջ բիւզանդական ազդեցութիւնը ուրանալ կարելի չէ, քանի որ բազմաթիւ Յոյներ, Ասորիներ եւ Հայեր կ'ապրէին հոն է. դարուն (էջ 44): — Դ. գլխուն մէջ (էջ 46—62) Փոքր Ասիայի եկեղեցիներու բիւզանդական արուեստը նկատելի յետոյ, կ'անցնի Միջնադարի, Հայաստանի եւ Վրաստանի: Հայաստանի մասին կը գրէ էջ 68—78:

«Իրենց խոսվայոյզ եւ տխուր պատմութեան երկար ընթացքին՝ Հայերու կեանքը կենդրոնացած էր իրենց եկեղեցւոյն շուրջ: Իրենց մշակոյթն առաւելապէս եկեղեցական եղած է. կրօնական հոգւոյ գերակշռութեան վկայ են գեղակերտ եկեղեցիներու անհամար աւերակները. բազմաթիւ վանքեր կը ցուցնեն, թէ որքան ժողովրդական էր վանական կեանքը. գրականութիւնը գլխաւորաբար նուիրական բովանդակութեամբ է, եւ կրօնական ձեռագիրները դարձանկարները գեղարուեստական ուժեղ արտայայտութիւններ են: Կաթողիկոսի, իրենց եկեղեցւոյն պետին դիրքը աշխարհական կարեւորութեան ունէր. ըլլալով տէր ընդարձակ հողերու, անկախութեան օրերուն՝ նա միապետի համազօր հեղինակութիւն կը գործադրէր, իսկ ստրկութեան դարերուն՝ նա ազգին հոգեւոր եւ քաղաքական առաջնորդն էր: Քրիստոնէութիւնը շատ կանուխէն Հայաստան մտած է դաշտային մարդաշատ քաղաքներէն դէպի հիւսիս ընթանալով հաւանօրէն, բայց Քրիստոնէութեան իրրեւ ազգային կրօն հռչակումը 300 թուականէն յառաջ՝ գործն է Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ իւր մկրտած թագաւոր Տրդատի: Աւանդութիւնը այս երկուքին կը վերագրէ շատ մը քրիստոնէական եկեղեցիներու կառուցումը: Հայ եկեղեցին ինք զինքը կազմակերպեց Դ. դարուն՝ նման բիւզանդականին, բայց երբ ընդգրկեց Միաբնեայ ա-

ղանդը, որ 451ին Քաղկեդոնի մէջ դատարարուեցաւ, հեռացաւ Արեւելեան եկեղեցւոյ գլխաւոր ճիւղէն: Հայ եկեղեցւոյ անկախութիւնը վերջնականօրէն հաստատուեցաւ Դուռոյ ժողովին մէջ 552ին: 885ին Հայաստան վերագրուեց իւր անկախութիւնը, զոր երկար ժամանակ կրուսած էր, եւ մինչեւ 1046 կառավարուեցաւ Բագրատունեան հարստութենէն, որ իւր իշխանութիւնը պահեց բարոյական սուր ճօճացնելով կէս անկախ շատ մը ազնուական տոհմերու վրայ: Այս շրջանին վերջին հարիւր տարիները Հայաստանի մեծութեան դադարակէտը կը մատնանշեն: Բարբոթութիւն եւ խաղաղութիւն կը տիրէին երկրին վրայ. եկեղեցիներ, հիւանդանոցներ, եւ աղքատանոցներ շինուեցան, գիտութիւնը բարձր մակարդակի հասաւ, վաճառականութիւնը ծաղկեցաւ եւ գեղարուեստական նուիրելի ծաղկեցաւ եւ գեղարուեստական մղումներ յազուրդ գտան, նշանաւոր էին մանաւանդ սակերչութիւն եւ պղնձագործութիւն: ԺԱ. դարէն սկսած Հայաստանի պատմութիւնը անիշխանութեան եւ հարստահարութեան պատմութիւն է մեծ մասով: Օսմանեան պետութեան մաս եղաւ 1514ին, մինչ հիւսիսային բաժինն անցաւ յետոյ Ռուսաց: Մասնաւոր յիշատակութեան արժանի են Հայաստանի երկու նշանաւոր քաղաքները: Մինն է Էջմիածին, հին Վաղարշապատը, արդ՝ մեծ դիւղաքաղաք մը լի, ուր կը նստի կաթողիկոսը: Աւանդութեան համաձայն՝ Քրիստոս ինքնին իջաւ յերկինց փառօք եւ հրամայեց Ս. Գրիգորի որ իւր ծրագրին համեմատ եկեղեցի մը շինէ այն տեղ, ուր ինքը հիմը դրաւ սակեայ թակով: Հոս, ընդարձակ քառակուսւոյ մը մէջտեղ, պաշարուած վանական շէնքերէ, կանգնած է Էջմիածնի կաթողիկէն: Ուրիշ եկեղեցիներ կը ներկայացնեն նուիրական վայրեր, եւ արդիական կրօնական շինուածքներ կը յիշեցնեն ճարտարարուեստը ժամանակակից հայ որինադրին: — Երկրորդն է Անի քաղաքը, Մայրաքաղաք միջնադարեան Հայաստանի թագաւորութեան: Այժմ կորածան եւ թափուր, նա կը գտնուէր երբեմն աշտարակաւոր պարիսպներու երկար գծէն ներս երկու խոր խրամատներու միջեւ բարձրացող բարձրաւանդակի մը ետեւ: Անոր եկեղեցիներն ու ամրոցը արժանաւոր յուշարարներ են Հայաստանի մեծութեան դարուն: Շէնքերէն շատերը դարձանալի կերպով լաւ մնացած են եւ կարճագոյն հրաբխային քարը կը պահէ իւր նախկին թարմութիւնը:

Հայաստանի եկեղեցիներն ամրոջապէս քարաշէն չեն, ինչպէս երբեմն ըսուած է, այլ երկու կողմանէ ծածկուած են քառակուսի հրաբխաքարերով, որոնք խնամքով իրարու կցուած են: Ամուր եւ հաստատուն շինուածքի արտայայտութիւն ունին եւ պարզ ու խիստ լրջութիւնն է իրենց նկարագիրը: Շինուածքի արտաքին մէջ նախապատուութիւն տրուած է միշտ ուղիղ դժերու: Թեւերը կ'աւարտին եռանկիւնաձեւ կերպով ու զմբեթը ծածկուած է կոնաձեւ կամ բրգաձեւ տանիքով, որուն վարի եղբները երբեմն խոռոչաձեւ են: Գմբեթը կը հանգչի բազմանկիւն կամ գլխահանաձեւ բարձր թմբուկի մը վրայ: Անկիւնաղեղը (sqinch), որ աւելի կանուխէն սկսուած է գործածուել քան կախողը, կը տեսնուի Ուզունլարի, Էջմիածնի (Ս. Գայանէ), Մրէնի եւ մէջ: Կախողը, որ հարթ հատուած ունի եւ ոչ թէ կոր, երեւան կու գայ ի Թալին, Թալիչ, Անի (կաթողիկէն տխա. XXX) եւն: Արտաքին զարդարանքը սովորաբար պարզ է: Յաճախ կը բաղկանայ նա նրբասիւն վահագեղներէ, որոնք որմերն ու թմբուկը կը շրջապատեն (տխա. XXX): Անիի եկեղեցիներէն միոյն վրայ (Ս. Գրիգոր), աղեղնամէջերը լեցուած են թռչուններու, անասուններու եւ տերեւաձեւերու չքնաղ ու քնքուչ քանդակներով: Եթէ այսպէս զարդարուած շէնքերը թիթեաւրաց պերճութիւն մը ստացած են, անդին ուրիշ եկեղեցիներ կը պահեն իրենց խիստ լրջութիւնը: Հայաստան երկիր մըն է, ուր լեռները կը տիրեն բնապատկերին: Զինաւորները կը տիրեն ու անոր օժանդակները երկիրը երկուքի կը բաժնեն: Արդ կարելի է, որ բնապատկերն ազդած ըլլայ պարզ ու շնորհիւ շինուածքներու վրայ, որոնք կը կանգնուէին բլուրներու թիկունքներու վրայ եւ աշտարակաձեւ լեռներու միջեւ լայն հովիտներու մէջ: Վ ձեւով բարձր խորշեր յաճախ կը կիրարկուէին արտաքին մակերեսը բեկրեկելու համար: Անոնք կ'աւարտէին աղեղնաձեւ, երբեմն ճոխ ու ընտիր կերպով քանդակազարդուած, աւելի ստէպ խորաքանդակներով կամ խոռոչազարդերով: Ներքուստ նշելի են մոյթերու կամ որմերու վրայի իրարու կից բուրբասիւններ՝ իրրեւ աղեղնակիր: Անոնք ունին խորանարդ, խիստնջ կամ բարձր խոյակներ (յաճախ վերնաղիւրով — import) որոնց վրայ տեղ տեղ քանդակուած են երկրաչափական գծազարդեր: Պատուհանները փոքր ու նեղ են եւ սովորաբար բլուրազրուխ: Անոնց

Էջմիածնի կաթողիկէն չորեքրոր խաչ-
քառակուսի յատակագծով է, բայց կը թուի
թէ նախնաբար եղած է չորեքրոր չորս
կողմանոցներով, եւ ամբողջն արտաքուստ
ձեւացուցած է քառակուսի մը: Ներկայ յա-
տակագծէն ինչ ինչ մասեր կրնան մինչեւ
է. դարու վերագրուել բայց դարերու ըն-
թացքին բազմաթիւ փոփոխութիւններ եղած
են Հայկական մեծ ուխտատեղւոյն վրայ: Գա-
ւիթն ու զանգակատունը ժէ. դարէ են:
Նշխարաց համար սենեակ մը աւելցուած է
արեւելեան կողմ 1881ին:

Խաչ-Ֆառակուսի: Քանի որ ներմու-
ծուած կամարներով զմբեթն ըստ բաւականի
կը պրկուէր, կոնքերը տակաւ անհետացան
եւ խաչ-քառակուսի յատակագիծն իրագոր-
ծուեցաւ: Ուստի, Ստրչիգովսկիի համա-
ձայն, դասական բիւզանդական յատակա-
գիծը յառաջ եկած է զմբեթաւոր քառա-
կուսւոյ եւ չորեքրոր խաչ-քառակուսւոյ
միջոցով: Երկու մոյթերով խաչ-քառակուսի
տիպը կը գտնուի յԱկոսի (Ժ. դար) եւ յԱս-
տապատ (Ժ. դար): Չորս կենտրոնական
մոյթեր ունին Ս. Գայանէ (630ին) յէջմիա-
ծին, Մրենի կաթողիկէն (640ին) եւ Անի:
Անւոյ կաթողիկէն (տխտկ. XXX) Հայաս-
տանի ամենանշանաւոր յուշակերտն է: Յու-
շագրի մը համեմատ զայն աւարտած է Հայ
թագուհին Կատարանիկէ՝ 1010ին: Մինչեւ
Անի յառաջացող հին ճամբորդներու վրայ
խոր տպաւորութիւն թողացած է սրաղեղ-
ներուն եւ խրճատիներուն Գոթական երե-
ւոյթովը: Պայտաղեղը կ'երեւի արեւելեան
թեւին վրայ, ու նոյն իսկ սրաղեղները վարի
մասերուն մէջ պայտաղեղի թեթեւ թեթուած
մը ունին: Ծքեղ փակաղեղներու շարք մը
երկարանուրը սիւնակներով շնորհք կու տայ
արտաքին որմերուն, որոնք ծակուած են նեղ
բոլորագլուխ պատուհաններով եւ ներս քա-
շուած շրջանակներու մէջ գետեղուած կ'ըր
բացուածքներով — oculi աչքը:

Խաչ-քառակուսի տիպը մեծ ժողովրդա-
կանութիւն ստացաւ Վրաստանի մէջ, մա-
նաւանդ ժ. դարուն: Վրական այս եկեղե-
ցիները — նման աղեղնաշարքերուն — շատ
կը նմանին Հայկականներուն: Յիշատակելի
են Gelati վանքին եկեղեցիներն ի Կովկաս:
Հոն կը տեսնենք սովորական կոնսաձեւ տա-
նիքը եւ ամէնէն մեծը զարդարուած է ներսէն
խճանկարներով: Սեւ Ծոփու վրայ՝ Պիծուն-
դայի մէջ կը գտնուի երկսիւնեան եկեղեցի

մը՝ կ'ըր կողակներով եւ կ'ըր զմբեթա-
ծածով:

Խաչագմբէք բասիլիկա: Խաչ-քառա-
կուսին եւ խաչագմբէք բասիլիկան Հայաս-
տանի մէջ իրարու խառնուելով կը կազմեն
նոր տիպ մը, որ իւր երկարութեամբ եւ
թեւերուն նեղութեամբ կը զանազանուի:
Գունոյ եկեղեցին (է. դար), Թալինի կաթո-
ղիկէն, Կուտայիսի կաթողիկէն (ԺԱ. դար)
կողակներ ունին հիւսիսային ծայրն ու հա-
րաւային խաչթեւերուն վրայ: Կուտայիսի
եկեղեցին ամենակարեւոր յուշակերտն է
Վրաստանի եկեղեցական ճարտարապետու-
թեան: Freshfield (1869) կը նկարագրէր զայն
իւր «աւերակները բիւզանդական սիրուն կա-
թողիկէն մը: Չորս հոյակերտ մոյթեր, որոնք
աակաւին կանգուն են, երբեմն կը կրէին կեն-
դրոնական զմբեթը: Գաւիթը շատ ուշագրաւ
է ու մենք նկատեցինք քանդակներուն մէջ՝
խոյի գլուխը, կարծես թէ Ոսկեղեղմի զրոյցը
ճանօթ եղած եւ զայն շինողներէն գնահա-
տուած ըլլայ»: Մովսիսի կաթողիկէն, այժմ
աւեր, մէկ ուրիշ կարեւոր օրինակն էր վրա-
կան ճարտարապետութեան: Այս երկու
թեւերով խաչագմբէք բասիլիկան ԺԱ. դա-
րու սկիզբներէն է, եւ յատակագծով կը նմանի
Կիւսի (Ռուսիա) Ս. Սովիտային:

Ուղունլար (Ը. դար) եւ Բագաւան (է.
դար) չունին խաչկողակներ: Առաջինը հնա-
զոյն օրինակն է բազմանկիւն զմբեթի մը կա-
րեւոր բարձրութեամբ, պսակուած սուր տա-
նիքով: Տեկոսի եկեղեցին, զոր անցեալ դա-
րուն Fergusson եւ Texier իրենց գործերուն մէջ
նկատի առած են եւ որ Հայաստանի հնազոյն
եկեղեցիներէն մին կը համարուի, թեւաղբ
կ'ըլլայ մտածելու, որ խաչագմբէք բասիլի-
կան զարդացած յառաջ եկած է «եռանաւ
սրահաձեւէն» այնու որ մէջտեղը զմբեթ ու
կամարներ ներմուծուած են: Տեկոս նախնա-
բար բասիլիկայ էր, բայց յետոյ վրան չի-
նուած են զմբեթ մը եւ խաչթեւեր: Գմբեթը,
որ կոնսաձեւ էր եւ վարը՝ քառակուսի աշտա-
րակով պաշարուած, կայծակնահար փրած է
1912ին:

Հայաստանի դիրքը բիւզանդական ճար-
արապետութեան պատմութեան մէջ կա-
խում ունի մեծապէս անոր եկեղեցիներու
թուականներէն: Հոս մեր տուած թուական-
ները մասնանշուած են Ստրչիգովսկիի, յա-
ճախ մեծաւ իրաւամբ, բայց անոնց կը հա-
կառակին Դիլ, Մակլէր եւ ուրիշներ, որոնք

շատ մը եկեղեցիներ Ժ. եւ ԺԱ. դարերու կը
վերագրեն: Թուականներու հնութիւնը ըն-
դունողները՝ Հայաստանէ եկած կը համարին
խաչքառակուսին. իսկ միւսները զայն Կապ-
պազովիկայէ Հայաստան անցած կը կարծեն:
Խնդրոյն լուծման համար մոռնալու չէ այն
ճանօթ աղեցուցութիւնը, զոր Հայերը բիւզան-
դական արքունեաց մէջ ունեցած են: Հայազրի
էին ամէնէն ութեղ կայսրներէն ոմանք:
Թ. դարէն սկսեալ՝ շատ Հայեր կու գային
Կ. Պոլիս իրր վաճառական, կրօնաւոր, եւ
ուսանող: Ս. Սովիտան՝ 989ին երկրաշարժէն
փրկուելէ յետոյ — նորոգող ճարտարապետ-
ներէն մին էր Տրդատ, Անւոյ կաթողիկէի
ճարտարապետը: Բիւզանդիոն քիչ աղբուած
չէր մշակոյթին այս ճարպիկ եւ ճարտար ցե-
ղին, որուն հանձարն ու ձեռնբէցութիւնը ա-
նոր աղբեցութիւնը սեպհական լեռնաշխարհի
նեղ սահմաններէն անդին տարածեց:

Խօսելով Կ. Պոլսոյ յետնադոյն եկեղե-
ցիներու մասին (էջ 97) թէ՛ պատմականօրէն
եւ թէ՛ ճարտարապետօրէն ուշագրաւ կը
գտնէ Ս. Մարիամ Մոնղուաց ԺԳ. դարէն:
Անոր յատակագիծը — չորեքրոր քառա-
կուսի ընդարձակ Նարթեքով — սրաղեղի
գործածութիւնը, եւ անոր շինութեան պա-
րազաները անտարակոյս կը դարձնեն անոր
Հայկական ծագումը:

Վրական եւ Հայկական աղբեցութեան
կ'ընծայէ որմերու այն խորաքանդակները,
գալարուն տերեւազարդերն ու մտացածին
վիշապաձեւերը, որոնք Եուրիւս-Պոլսիկի
Ս. Գէորգի վրայ (1230) կը տեսնուին:

Վերջին գլուխը նուիրուած է բիւզան-
դական ճարտարապետութեան՝ Արեւմուտքի
մէջ: Եւ հետագոտութիւնը կը վերջացնէ հե-
ղինակը յիշատակելով Germigny-des-Près (Օր-
լէանի մօտ) եկեղեցին: Անոր չորեքրոր յա-
տակագիծին մէջ Ստրչիգովսկիի հետ Հայկա-
կան աղբեցութիւն կը տեսնէ (էջ 152):

Հ. Ս. ԿՈԳՆԱՆ

N. ADONTZ, Les Dalassènes [Notes arméno-byzantines
V] Byzantion 10 (1935), էջ 171—185:

Նիկողայոս Ադոնց Byzantion պարբերա-
կանին մէջ կը հրատարակէ շահեկան ուսում-
նասիրութիւններ Notes arméno-byzantines
ընդհանուր վերնագրի ներքեւ, որուն հինգ-
երորդ մասը կը հայի Դալասենեանց, որոնք

նշանաւոր գերդաստան մը կը ներկայանան
հայ-բիւզանդական պատմութեան մէջ: Նկա-
տելով գրուածին կարեւորութիւնը կու տանք
հոս ամփոփ բովանդակութիւնը:

Դալասենեանք աւատական մեծ ընտա-
նիքներու կարգին աղբեցիկ շէրք մը կը գրա-
ւէին Վասիլ Բ. ի ժամանակ: Ասոնց նախա-
հայր կը նկատէ Դամիանոս Դալասենոս, զոր
Վասիլ Բ. 995ին Անտիոքի կուսակալ անուա-
նեց պարտուած Միքայէլ Բուրցէսի տեղ: Սա
պատերազմական դաշտի վրայ միշտ յաղթող
կը հանդիսանայ, բայց 998ին Դամասկոսի
ամիրային դէմ մղած յաղթական ճակատին
մէջ տէգի հարուածի մը զոհ կ'երթայ: Դա-
միանոսի որդիներէն էին Թէոփիլակոսս եւ
Կոստանդինոս: Առաջինը մեծ դեր կը խա-
ղայ 1022ին Վասիլ Բ. ի դէմ յարուցուած
ապստամբութեան ժամանակ, որուն պարա-
գլուխներն էին Նիկիփոր Փոկաս եւ Նիկիփոր
Քիլիխաս, որոնք ի վերջոյ իրարու հետ զժտե-
լով վերջինս զՓոկաս սպաննել կու տայ եւ
Թէոփիլակոսս, որուն յանձնուած էր այս
ապստամբութիւնը զսպելը, կը յարձակի Քի-
լիխասի վրայ, կը յաղթէ, զինքն ալ զերի բռնե-
լով բանտարկել կու տայ: Աւելի նշանաւոր
եղաւ Թէոփիլակոսսի եղբայրը՝ Կոստանդին:
Առաջին անգամ կը յիշուի իբրեւ Անտիոքի
վերակացու Վասիլ Բ. ի թագաւորութեան
վերջերս՝ 1025ին: Կայսեր մահուանէն ետքն
անոր եղբայրն ու յաջորդը՝ Կոստանդին Ը.
գլխատանդին այս պաշտօնէն վար կ'առնէ:
սակայն մահուան պարագային կ'ուզէր որ
այս շնորհազուրկ եղած Կոստանդին Դալա-
սենոսն, որ քաշուած էր Հայկական բանա-
կաթեմի իւր հայրենի դաւառները, ետ դար
որպէս զի զինքն իրեն զահաժտուանդ կար-
դէր. սակայն Սիմէոն պալատականը կայսեր
միտքը փոխել կու տայ իր Ռոմանոս բարե-
կամին ի նպաստ: Ասոր մահուանէն ետքն ալ
արքունի սենեկապանը Յովհաննէս կը յաջողի
զահր գրաւել 1034ին իր Միքայէլ եղբոր հա-
մար եւ միաժամանակ վախնալով Դալասե-
նեան ընտանիքէն կ'որոշէ ասոր վերջ մը տալ
եւ աքսորել կու տայ Կոստանդինի միւս երկու
եղբայրները՝ Թէոփանէս եւ Ռոմանոս պա-
տրիկներն եւ ասոնց եղբորորդին՝ Ալբրիանոս
(Թէոփիլակոսսի որդին): Աւելի ուշ կը յի-
շուին սակայն Դալասենեան ընտանիքէն ուրիշ
երկու անդամներ ալ՝ Դամիանոս Բ. եւ Կոս-
տանդին Բ.: Առաջինն իրր 1073ին Միքայէլ
Պարպիւնակէսի զօրավարներէն մին էր, որ

թէ հոս յառաջագոյն հայեր գոյութիւն չեն ունեցած: Կղաւթիայի եւ Գուբբոսի լեռնադաշտն իր քաշուած զիւրքովն արար-բիւզանդական պատերազմական մեծ արշաւներուն զիմաց միակ ապահով ապաստանարանը կը կացուցանէր հայ աւատականներուն համար, որոնք իրենց ազատութեան եւ անկախութեան վրայ հաստատուն կը կենային:

Դարասենեաններու ընտանիքը հաստատուած էր ի Դալաշ(ա): Վերոյիշեալ ձեռագրին մէջ անուան գրուած է Տալաշ(ա), հայ արեւմտեան գաւառաբարբառներու համաձայն, ինչպէս որ Կղաւթիան ալ Կղաւթիա գրուած է: Բիւզանդացիներն անուան Տիլասոս, Διλασσοσ, Διλασσοσ, Διλασσοσ, քացառութիւն կը կազմէ Աննա Դարասենեան կիւրորդադասուհին, որ կնիքներուն վրայ ալ միշտ երկու -ո- ով կը յիշուի: Այս երկու -ո- ով կ'ուզէին Բիւզանդացիներն անտարակոյս սկզբնական -ը- հնչիւնն արտայայտել, ինչպէս հին ժամանակ յաճախ -է- ով կը նշանակէին:

Դարասենեաններու ծագման մասին ըսուածները պէտք չեն զարմանալի գալ նկատելով որ բիւզանդական ազնուական ընտանիքներն, որոնք թէ՛ Վասիլ Բ. ի ժամանակ եւ թէ՛ անկէ յառաջ առաջին անգամ երեւան եկած են, մեծ մասով Եփրատեան երկիրներէ ծագում առած են, բաւական է յիշելը Բուրցէսեանք, Մանիակէսեանք, Վրախամիտեանք, Կուրտիկիոսեանք եւ ուրիշները: Կերեւայ թէ առաջին Դարասենեանք՝ Դարասայի տէրն այս տեղը թողուցած է հայկական բանակաթեմն անցնելու համար, ինչպէս Կուրտիկիոսը, Մանուէլը, Բասսակէսն եւ ուրիշները: Երբ Կոստանդին կայսրը Կոստանդին Դարասէնոսը փնտռել տուաւ, գտան զինքը հայկական բանակաթեմի մէջ՝ իւր տունը (κατὰ τὸν Ἀρμενιαχὸν ἐν τῷ ἰδίῳ οἴκῳ σχολάζοντα Կեդրենոս, II, էջ 484):

Բուրցէսէն ետքն Անտիոքի դուքս անուանուեցաւ Վասիլ Բ. Էն Դամիանոս, որովհետեւ ամբողջ երկրի մէջ ծանօթ էր իրրեւ մեծ կալուածատէր ի Դալասոս: Այս պատճառով ալ Անտիոքի բնակիչներն զգալի համակրութիւն ցոյց կու տային անոր որդւոյն՝ Կոստանդին Դարասենեանին հանդէպ: Մագիստրոսութեան աստիճանը Դամիանոս ստացաւ առանց զինուորական ծառայութեան աստիճաններէն անցնելու. այս բարձր աստիճանով

վարձատրուեցաւ նա անմիջապէս, երբ Կայսեր ծառայութեան մէջ մտաւ, ինչպէս Գրիգոր Տարօնեցին կամ Սենեքերիմ թագաւորն, ինչպէս կը վկայէ Կեկաւմենոս՝ Strategikon գրքին հեղինակը:

Միւս կողմանէ կը տեսնուի նաեւ որ Դարասենեաններն այն բիւզանդական ընտանիքներուն թուոյն կը պատկանին, որոնք հայ ծագում ունէին: Մեսրոբ երէց իր 967ին խմբագրուած գործքին մէջ զետեղած է գահնաւակի ուրիշ ընթերցուած մը (բաւական ընդլայնուած), որուն մէջ կը թուէ աւատական շրջանին հայ ընտանիքներն ըստ իրենց գահին, այսինքն արքունիքին մէջ իրենց գրուած աստիճանին համաձայն: Արզ, Մեսրոբին քով կը գտնենք Լիկանդեանք եւ Կղունդիք անունները: Մեսրոբի գործը մեզի հասած է մէկ ձեռագրով, որ 1131 տարիէն է: Միակ ընտանիքն, որ Ժ. դարու առեւնները Կղաւթիա ծանօթ ըլլալու էր, Դարասենեանց ընտանիքն էր: Մեսրոբ զանիկա կը նկատէ իրրեւ հայ ընտանիք: Լիկանդեանց՝ նշանաւոր Մելիտաի ընտանիքին յիշատակութիւնն արդէն կը վկայէ թէ Մեսրոբ լաւ երազել է գրածին:

Հ. Վ. ԻՆՊԼԻՋԵԱՆ

ԳԱՐԵԳՈՒՆ ԼԵՆՈՆԵԱՆ, Հայոց պարբերական Մամուլ-լիակատար ցուցակ հայ լրագրութեան սկզբից մինչեւ մեր օրերը (1794—1934): Առաջաբանով, ներածութեամբ, Ծանօթութիւններով եւ Աղիւսակներով: Կազմեց —: Երեւան 1934, 8⁰ մեծ., էջ ԼԱ + 232: [Հրատարակութիւն Մելիտեան Ֆոնդի:] Գին՝ 20 ռուբլի:

«Հայաստանի Պետական Գրապալատի Վարչութիւնից 1930 թ. յուլիս ամսին մեղ առաջարկութիւն եղաւ յանձն առնել բիրդիտորաֆիական մի մեծ աշխատանք. այն է կազմել բովանդակ հայ լրագրութեան լիակատար ցուցակը, սկզբից մինչեւ մեր օրերը՝ իւրաքանչիւր պարբերականի հրատարակութեան տեղի, սկզբելու եւ դադարելու քվակաւնների, նրանց խմբագիր-հրատարակիչների եւ տպարանների յիշատակութեամբ» (Յառաջաբան, է):

Այս հակիրճ քացատրութիւնն է աշխատութեանս ծրագրին, որ կ'ընդգրկէ լիակատար ցուցակ մը հայ լրագրութեան 1794—1934 շրջանի համար: Նկատի առնուած է 1586 անուն, դասաւորուած ժամանակագրական կարգով:

Ներածութեան մէջ (էջ Ժէ—ԼԱ) համառոտ տեսութեամբ գծուած է «հայ լրագրութեան անցեալը» մինչեւ 1918, ուր կը պատկերացուի հայ լրագրութեան պատմութիւնը կարեւոր դերերու մէջ: Հեղինակը անտեսած է հոս «Հանդէս Ամսօրեայ»ն, որ այս տարի իւր գոյութեան 50ամեայ հասակին մէջ է եւ կատարած է ինչպէս գրական, բանասիրական եւ առհասարակ հայագիտութեան, նոյնպէս լրագրութեան պատմութեան համար ակնհաս դեր, շատ կէտերու մէջ անմրցելի համասեռ պարբերականներու թուին:

Յուցակը կազմուած է հետեւեալ բաժանումներով.

- Ա. Ժամանակագրական (էջ 1—170):
- Բ. Հայոց պարբերական մամուլը ըստ հրատարակութեան վայրերի (173—191):
- Գ. Հայերէն պարբերականներն ըստ բնոյթի եւ բովանդակութեան (192):
- Դ. Հայոց պարբերական մամուլը. խմբագիրները եւ հրատարակիչները պարբերական ցանկը (193—203):
- Ե. Յանկ հայ տպարանների ուր տպագրվել են մեր պարբերականները (205—208):
- Զ. Հայոց պարբերական մամուլը այրենական կարգով (209—226):

Շնորհաւորելի է Կազմողին յաջողութիւնը աշխատութեանս մէջ: Առանց տարակուսի այս գործը ճոխագոյն ցուցակը կը ներկայացնէ հարիւր քառասունհայ հայ լրագրութեան: Հարուստ է հոս մասնաւորապէս 1914—1934 տարիներու Հայաստանի, Կովկասի եւ առհասարակ Ռուսաստանի եւ Խորհրդային ԽՍՀՄ-ի լրագրութեան մէջ լոյս տեսած լրագիրներու բաժինը: Խնամով հաւաքուած են հոս նաեւ «արտասահմանեան» թերթերը, որոնք ճոխ են նոյնպէս, թէեւ ոչ ցանկալի կատարելութեամբ:

Գարեգին Լեւոնեան ծանօթ է արդէն հայ լրագրութեան պատմութեան մէջ ոչ միայն իրրեւ խմբագիր, այլ եւ իւր «Հայոց պարբերական մամուլը» (Ալեքսանդրապոլ 1895) աշխատասիրութեամբ եւ զանազան լրագրական ցուցահանդէսներով: Ունի նաեւ անձնական հաւաքածոյ հայ պարբերական մամուլի: Աշխատութեանս համար աչքի առաջ ունեցած է նաեւ Երեւանի եւ Էջմիածնի Պետ. Մատենադարաններն եւ այլ հաւաքածոներ: Հոն, ուր առ ձեռն ունի թերթերն, վստահելի են իր տեղեկութիւնները, որոնք շատ խնամով եւ ճշգրտութեամբ հաղորդուած են: Կը տես-

նուի սակայն, թէ մեծ խումբ մը թերթերու, գլխաւորաբար անոնք, որոնք լոյս տեսած են արտասահման, անմատչելի եղած են իրեն. եւ ստիպուած է դիմել հրատարակի վրայ ծանօթ ցուցակներու, որոնց հաղորդագրութիւնք ամէն անգամ ճշգրտութեամբ չեն, ուստի եւ ոչ վստահելի եւ բաղձալի կատարելութեամբ: Այս դէպքերուն ստիպուած է ախաժայ յառաջ բերել այնպէս ինչպէս գտած է իւր աղբիւրներու մէջ: Այս աղբիւրներէն մին է Հ. Ռ. Կարապետեանի «Լիակատար ցուցակն հայերէն լրագիրներու, որոնք կը գրանուին Միլիթարեան Մատենադարանին մէջ ի վիեննա 1794—1921» (լոյս տեսած նախ «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ եւ ապա առանձին՝ վիեննա 1924):

Հ. Կարապետեանի այս ցուցակին մէջ նշանակուած են ոչ միայն այն թերթերն որոնք կը գտնուին Միլիթարեան Մատենադարանի մէջ, այլ եւ անոնք, որոնք չեն գտնուիր: Թէ մէկ եւ թէ միւս բաժնին մէջ սպրդած են վրիպակներ, մասամբ տպագրական եւ մասամբ անուշադրական, որոնք զայնպիսով թեմա առ թեմա տուած են շատերու, անոնց թուին մէջ նաեւ Գ. Լեւոնեանի: Յուցակը չէր կազմուած նաեւ այն ծրագրով, զոր ընտրած է Լեւոնեան իւր աշխատութեան համար. այս պատճառաւ ալ օգտագործուին ալ թերոյթներ ընծայած է աշխատութեանս մէջ: Անխուսափելի էին այս թերոյթները, քանի որ գործը ի գլուխ հանուած է Երեւան, առանց գործակցի Արտասահմանի մէջ: Տեղն է ըսելու, թէ նման բիրդիտորաֆիական աշխատութիւններ, ինչպէս են Հայկական Մատենագիտութիւնը եւ Յուցակ հայ լրագրութեան, պէտք է ի գլուխ հանուին համագործակցութեամբ: Վիեննա, Վենետիկ, Պարիս, Հռոմ, Երուսաղէմ, Կ. Պոլիս եւ այլ քաղաքներ գոյութիւն ունին հայկական մատենադարաններ, որոնց բովանդակութիւնն միացնելով Երեւանի, Էջմիածնի եւ Թիֆլիսի Մատենադարաններու մէջ գտնուած հայերէն գրեանդարաններու հետ, կարելի է կազմել ճոխ Հայկական Մատենագիտութիւն մը, եթէ անգամ մը արմատ գտնէ գրասէրներու սրտերու մէջ համագործակցութեան գաղափարը: Ես շատ կը ցաւիմ, որ Հայաստանի Գրապալատը, երբ յղացած է այս գեղեցիկ գաղափարը, կազմել Լիակատար ցուցակը հայ պարբերական մամուլի, համագործակցութեան չէ հրաւիրած վիեննայի եւ վենետիկի Միլիթարեան Մա-